

## Հայտարարություն

«Դիվիսա Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերությունը (հիմնադրման ամսաթիվը՝ 10-ը հուլիսի, 2012թ) հայտարարում է իր՝ 2017թ. գործունեության և ֆինանսական հաշվետվությունների արտաքին հաշվեքննության (աուդիտի) իրականացման մրցույթը, որը կիրականացվի ք. Երևան, Բաղրամյան 5 /բնակարան 11/ հասցեյում, հետևյալ պայմաններով.

Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ Հրապարակային Սակարկությունների (մրցույթների կազմակերպման) օրենքին, ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աուդիտի ստանդարտներին, Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից հրապարակված աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան:

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք ունեն գործող, համապատասխան լիցենզիա և տվյալ բնագավառում աշխատանքային փորձ, Հայաստանի Հանրապետությունում բարձր հեղինակություն, բարի համբավ/ և կամ միջազգային ճանաչում: Աուդիտորական կազմակերպության գլխավոր աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և/կամ/ աուդիտորական վորակավորման փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հաստատող փաստափուղթ (վկայական), կամ ՀՀ աուդիտորների և հաշվապահների ասոցացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում: Աուդիտորական խմբում ներգրավված ածխատակիցների առնվազ կեսը պետք է ունենան աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ՀՀ աուդիտորների և հաշվապահների ասոցացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում:

Մրցույթին մասնակցելու հետաքրքրություն ունեցող կազմակերպությունները աուդիտն իրականացնելու հայտերը՝ կազմակերպության մասին տեղեկություններով (կազմակերպության համառոտ պատմություն, աշխատանքային փորձ, ներգրավվող աշխատակազմի մասին համառոտ տեղեկատվություն և աուդիտի իրականացման բյուջե) կարող են ներկայացնել «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ գրասենյակ, կամ ուղարկել [info@divisa.am](mailto:info@divisa.am) էլ-հասցեյին մինչև 2018թ. փետրվարի 15-ը, երկուշաբթիից ուրբաթ՝ 10<sup>00</sup>-17<sup>00</sup>:

Աուդիտորական եզրակացության և Ընկերության ղեկավարությանն ուղված նամակը ներկայացնել մինչև սույն թվականի ապրիլի 15-ը:

Մրցութային հանձնաժողովի հատուկ նիստը տեղի կունենա սույն թվականի փետրվարի 19-ին, իսկ մրցույթի հայտերի ամփոփման նիստը՝ փետրվարի 20-ին:

Հրապարակային մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և սոսնձված ծրարներում: Պահանջվող անրաժեշտ փաստաթղթերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ [փաստաթղթերի գանկ](#)

Լավագույն մրցութային պայմանները պարունակող հայտերի քննարկման ժամանակ հարցումների և դրանց պատասխանների հիման վրա մրցույթի ամփոփման օրը՝ մրցութային հանձնաժողովը որոշում է մրցույթի հաղթողին:

Մրցույթի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն համար կարող եք դիմել՝

«Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ,

ք. Երևան, 0019, Բաղրամյան պողոտա 5, բնակարան 11;

հեռ.՝ +374 10 58 09 72;

[www.divisa.am](http://www.divisa.am)